



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 5, 2022

ՔՈԱՖ-ը և ԳՄՅԸ-ն գիտության և արվեստի միջազգային փառատոնը բերում են Լոռի

ԵՐԵՎԱՆ — Սեպտեմբերի 10-ին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) կանցկացնի ՍԹԱՐՄՈՒՄ օր Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում՝ բացահայտելու և տոնելու գիտության և արվեստի հանդիպումը: Փառատոնը, որի շատ սպասված մեկնարկն այս տարի տեղի կունենա Երևանում, հասանելի կլինի նաև Լոռու մարզի գյուղական համայնքներին՝ հրավիրելով տեղացի և միջազգային հյուրերին ներկա գտնվելու կենդանի երաժշտական կատարումների, մասնակցելու քննարկումների և այլ հետաքրքիր ծրագրերի:

Այս տարի «STARMUS VI. 50 տարի Մարսի վրա» խորագրով փառատոնը կանցկացվի Երևանում սեպտեմբերի 5-10-ը՝ հայ երիտասարդ սերունդներին գիտության աշխարհի ուսումնասիրությամբ ոգեշնչելու համար: ՔՈԱՖ-ի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՅԸ) համատեղ ջանքերի արդյունքում, որի նպատակն է բացահայտել Լոռու մարզի զբոսաշրջային ներուժը, տարվա սկզբին փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց ՔՈԱՖ-ի և «ՍԹԱՐՄՈՒՄ»-ի համահիմնադիր Գարիկ Իսրայելյանի միջև՝ աշխարհահռչակ փառատոնը Լոռու երիտասարդներին հասանելի դարձնելու և մինևույն ժամանակ մարզի տեսանելիությունը տեղացի և միջազգային այցելուների շրջանում մեծացնելու համար:

«Ուրախ ենք օժանդակել «ՍԹԱՐՄՈՒՄ օրը ՍՄԱՐԹ-ում» միջոցառմանը, քանի որ վստահ ենք, որ այն կլրացնի տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանն ուղղված այլ ծրագրերի, և կօգնի նաև բարձրացնել Դեբեդի կիրճի մասին իրազեկվածությունը», - նշեց ԵՄ-ն բիզնեսի համար «Նորարարական տուրիզմի եւ տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար (ITTD)» ծրագրի ղեկավար Վիլիելմ Յուզոն:

Միջոցառմանը համերգային ծրագրով կներկայանան մի շարք հանրահայտ հայաստանյան և միջազգային խմբեր, այդ թվում՝ Դոգմա, Կալանդրա, Կաթիլ, Հայկ Կարոյի, Դեդ, Ռոզեն

Թալ, Մանիժա և Յոդ Արթուն: Գիտական դասախոսություններով հանդես կգան գիտության աշխարհի հեղինակավոր գործիչներ, այդ թվում՝ Նոբելյան մրցանակակիր Միշել Մայորը, ՆԱՍԱ-ի Մարս ծրագրից ֆիզիկոս Սքոթ Յաբարդը, ՆԱՍԱ-ի Ռեակտիվ շարժման լաբորատորիայից Արթի Կարապետյանը, Astronomy ամսագրի գլխավոր խմբագիր Դեյվիդ Էյխերը՝ ավագ խմբագիր Մայքլ Բակիչի հետ միասին:

Հյուրերը կկարողանան ուսումնասիրել տիեզերքի անհունությունը լրացուցիչ միջոցառումների ընթացքում, ինչպիսիք են աստղադիտումը և պլանետարիումի ցուցադրությունները: Լոռու ձեռներեցների տաղանդին ու ներուժին այցելուները կարող են ծանոթանալ բացօթյա ցուցահանդեսի ժամանակ, որտեղից էլ կկարողանան գնել բացառիկ արտադրանքներ՝ նպաստելով համայնքների զարգացմանը:

«ՍԹԱՐՄՈՒՄ օրը ՍՄԱՐԹ-ում» միջոցառումն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՅԸ) և ԶՈԱՖ-ի կողմից համատեղ իրականացվող «Լոռին՝ քո նոր ուղղությունը» ծրագրի շրջանակներում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ԶՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնախնամում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ԶՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ԶՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

STARMUS VI միջազգային փառատոնի մասին

STARMUS միջազգային փառատոնը կապված է Ստիվեն Յոկինգի, Բրայան Մեյի, Ալեքսեյ Լեոնովի և աշխարհահռչակ այլ հայտնի անունների հետ: Այն 2011 թվականից անցկացվել է Թեներիֆե կղզում (Կանարյան կղզիներ, Իսպանիա), հետագայում նաև Նորվեգիայում, Շվեյցարիայում: Փառատոնը միավորում է գիտությունը, կրթությունը, արվեստն ու տեխնոլոգիաները եւ նպատակ ունի հանրայնացնելու գիտությունը մարդկության համար արվեստի միջոցով:

STARMUS փառատոնը համարվում է միակն աշխարհում, որ նման մասշտաբի միջոցառումներ և խոսակներ է ունենում: Փառատոնի շրջանակներում անցկացվող միջոցառումները տարբեր են և ընդգրկում են թե՛ դասախոսություններ ու համերգներ, և թե՛ գիտական ճամբարներ, կլոր-սեղաններ, որոնք նպատակ են ունենում հանրայնացնելու գիտությունը և հասանելի դարձնելու այն լայն շրջանակների համար՝ հատկապես ուսանողների ու երիտասարդության:

STARMUS փառատոնի շրջանակներում է շնորհվում նաև աշխարհահռչակ գիտնական Սթիվեն Յոքինգի

հեղինակավոր շքանշանը (մեդալը), որը ճանաչում է գիտության հանրայնացման գործում ներդրումը: